Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 155/6
(վարչական տույժ նշանակելու վերաբերյալ)

«10» փետրվարի 2023թ. ք. Վանաձոր

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության պետ Գոռ Բակլաչյանս, քննելով քաղաքացի Վլադիմիր Դավիթի Թաթուլովի (անձնագիր՝ AR0598455, քաղաքացիություն՝ ՀՀ, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան 8-րդ մկրշ, 5-րդ թղմ., 85 տ., ծնված՝ 29.08.1989թ.) կողմից մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

1. **<u>Գործի նկարագրությունը:</u>**

Քաղաքացի Վլադիմիր Դավիթի Թաթուլովի կողմից 19.01.2023թ.-ին Բագրատաշենի մաքսային կետ-բաժնով թիվ 05100033/190123/0000770711/00 մաքսային մուտքի օրդերով 9 օր ժամկետով, ժամանակավոր ՀՀ է ներմուծվել «BMW - 545 I» մակիշի, WBANB31050B067226 նույնականացման համարով, VO080VA պետհամարանիշով, 2004թ. արտադրության տրանսպորտային միջոց, որի ներմուծման ժամկետը սահմանվել է մինչև 28.01.2023թ., սակայն մինչ այդ ժամկետի ավարտը վերոնշյալ տրանսպորտային միջոցը չի արտահանվել ՀՀ տարածքից, որի արդյունքում խախտվել է հետադարձ արտահանման պարտավորությունը:

2. **<u>Սույն վարչական գործի քննության համար նշանակություն ունեցող փաստեր:</u>**

1. 19.01.2023թ. լրացված թիվ 05100033/190123/0000770711/00 մաքսային մուտքի օրդերի հիման վրա հետագա արտահանման պարտավորությամբ ժամանակավոր ՀՀ տարածք է ներմուծվել «BMW-545 I» մակիշի, WBANB31050B067226 նույնականացման համարով, VO080VA պետհամարանիշով, 2004թ. արտադրության տրանսպորտային միջոց:
2. 19.01.2023թ. լրացված թիվ 05100033/190123/0000770711/00 մաքսային մուտքի օրդերի հիման վրա հետագա արտահանման պարտավորությամբ ժամանակավոր ՀՀ տարածք ներմուծված «BMW-545 I» մակիշի, WBANB31050B067226 նույնականացման

համարով, VO080VA պետհամարանիշով, 2004թ. արտադրության տրանսպորտային միջոցի՝ խախտման օրվա դրությամբ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով հայտարարագրման դեպքում առաջացող մաքսային վճարները կազմում են՝ միասնական դրույքաչափով վճար՝ 10, 811,336 ՀՀ դրամ, ընապահպանական հարկ՝ 375,300 ՀՀ դրամ:

3. 10.02.2023 թվականին կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն: Վարչական գործի լսումները նշանակվել է 07.03.2023 թվականին ժամը 10:30-ին, գործի քննությունը՝ 10.03.2023 թվականին ժամը 10:30-ին, որի վերաբերյալ վերջինս պատշաճ ծանուցվել ներկայացել է վարչական գործի լսումներին, սակայն չի ներկայացել վարչական գործի քննությանը:
4. Սույն մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը քննվել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 332-րդ հոդվածի ուժով:

3. <u>Պատասխանողի դիրքորոշում:</u>

Ներկայացրել է տրանսպորտային միջոցի վթարի հետ կապված լուսանկար, բանավոր բացատրություն է տվել այն մասին, որ տեղի է ունեցել ինքնավթար:

4. <u>Սույն գործի փաստական և իրավական հիմնավորումները, վարչական մարմնի եզրահանգումները</u>:

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 264-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ անդամ պետություններում և Միության անդամ չհանդիսացող պետությունում

գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

Անդամ պետությունների ֆիզիկական անձանց կողմից՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, մինչև այն ժամկետի լրանալը, որի ընթացքում այդ տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավոր գտնվել Միության մաքսային տարածքում, Միության մաքսային տարածքից արտահանման, ազատ շրջանառության համար բացթողման կամ սույն հոդվածին համապատասխան այլ նպատակներով ենթակա են մաքսային հայտարարագրման»:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կատարած անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության»:

Նույն օրենքի 309-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ֆիզիկական անձանց կողմից հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունից չարտահանելը, եթե հետագա արտահանման պարտավորությունը խախտվել է ավելի քան տասն օրով՝ առաջացնում է տուգանք՝ ֆիզիկական

անձանց կողմից այդ տրանսպորտային միջոցներն ազատ շրջանառության համար բաց թողնելու նպատակով ներմուծելու համար նախատեսված մաքսային վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար գանձվող պետական տուրքի) մեծության տասը տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան երեսուն հազար դրամի չափով»:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 332-րդ հոդվածի համաձայն՝ «Մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործը քննվում է պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցությամբ կամ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված դեպքերում՝ տվյալ անձի բացակայությամբ: Մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործը կարող է քննվել սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի բացակայության դեպքում, եթե անձը բացակայում է, և հայտնի չէ նրա գտնվելու վայրը, կամ եթե նա գտնվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմաններից դուրս»:

Ուսումնասիրելով ներկայացված նյութերը, մաքսային մարմինը փաստում է, որ Վլադիմիր Դավիթի Թաթուլովը սահմանված ժամկետում չի արտահանել իր կողմից ժամանակավոր ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցը կամ չի ձևակերպել այլ մաքսային ընթացակարգով: Սահմանված ժամկետում չարտահանելով վերոնշյալ տրանսպորտային միջոցը կամ չձևակերպելով այլ մաքսային ընթացակարգով նա ցուցաբերել է անգործություն, որի արդյունքում խախտվել է հետադարձ արտահանման պարտավորությունը: Վերջինս տրանսպորտային միջոցի վթարի հետ կապված ներկայացրել է լուսանկար, բանավոր բացատրություն է տվել այն մասին, որ տեղի է ունեցել ինքնավթար, սակայն որևէ փաստաթղթային ապացույց չի ներկայացրել, որի պարագայում կհիմնավորվեր, թե երբ է տեղի ունեցել վթարը և արդյոք տվյալ տրանսպորտային միջոցը ենթակա է եղել վարման, թե ոչ:

Այսպիսով, վարչական մարմինը, քննելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ նշված տրանսպորտային միջոցի հետագա արտահանման պարտավորության չկատարման համար Վլադիմիր Դավիթի Թաթուլովի արարքում առկա է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 309-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ, ինչը հիմնավորվում է վարչական վարույթի նյութերով:

3. <u>Եզրափակիչ մաս:</u>

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 309-րդ, 322-րդ, 334-րդ հոդվածներով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 214-րդ, 234-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 309-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար քաղաքացի Վլադիմիր Դավիթի Թաթուլովին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով՝ **1,118,664** ՀՀ դրամի չափով:

2. Որոշման մասին հայտնել Վլադիմիր Դավիթի Թաթուլովին:

3. Պարզաբանել, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 334-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն որոշումն ուժի մեջ է մտնում այն կայացնելու պահից և համաձայն նույն հոդվածի 4-րդ մասի՝ Վարչական տույժ նշանակելու մասին մաքսային մարմինների որոշումը կարող է բողոքարկվել «Մաքսային ծառայության մասին» օրենքի 37-րդ հոդվածով սահմանված կարգով կամ դատական կարգով:

*Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է. **<u>900005024055 (ՀՀ պետական բյուջե, կենտրոնական գանձապետարան, Արևելյան մաքսատուն-վարչություն, ԿՈԴ 29):</u>***

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **ԳՈՌ ԲԱԿԼԱՋՅԱՆ**